1997, ՅՈՒԼԻՍ Ա (ԹԻՒ 9)

# Քրիստոնեայ Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ — ԷՋ 1-2
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ — ԷՋ 3
ԼՈՒՐԵՐ ԵՒ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ — ԷՋ 4
ՊԱՏՑԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ — ԷՋ 5
ԵԿԵՂԵՑԱՆՎԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ — ԷՋ 6
ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ — ԷՋ 7
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԹԵՄԱՆ Ե. ԹԱԴԵՒՈՍՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ — ԷՋ 8

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՎՍՏՐԻԱ

### ԺԱՄԱՆՈՒՄ ԳՐԱՑ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Հունիսի 23-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսն Ավստրիայի եւ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի եւ «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Բագրատ աբեղա Գալստյանի ուղեկցությամբ ժամանեց Ավստրիայի հարավում գտնվող Գրաց քաղաքը՝ մասնակցելու Եվրոպական Եկեղեցիների խորհրդի (ԵԵԽ) եւ Կաթոլիկ եպիսկոպոսների եվրոպական խորհրդի (ԿԵԵԽ) կողմից կազմակերպված Եվրոպական Եկեղեցիների Էկումենիկ երկրորդ համաժողովին, որի նշանաբանն է՝ «Հաշտություն. Աստծո պարգեւ եւ նոր կյանքի աղբյուր»:

Համաժողովի նպատակն էր քննարկել Եվրոպայի քրիստոնեական եկեղեցիների հաշտության, միասնության եւ հետագա համագործակցության հարցերը:

Ժամանելով Գրաց, Վեհափառ Հայրապետը, համաձայն նախապես կազմված ծրագրի, մասնակցեց Ստիրիա նահանգի նահանգապետի կողմից ի պատիվ հոգեւոր պետերի եւ բարձրաստիճան հյուրերի տրված ճաշկերույթին:

Կեսօրից հետո աշխատանքները սկսեց Եվրոպական Եկեղեցիների էկումենիկ երկրորդ համաժողովը: Համաժողովում Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացնում էին Հունաստանի հայոց առաջնորդ եւ ԵԵԽ-ի կենտրոնական կոմիտեի անդամ Ոսկան արքեպս. Գալֆայանը, Ավստրիայի հայոց առաջնորդ Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը, Ուկրաինայի հայոց առաջնորդ Նաթան եպս. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի միաբան Միքայել ծ. վրդ. Աջապահյանը եւ օրիորդ Անահիտ Սիմոնյանը:

Համաժողովի բացման եւ ողջույնի ելույթներով հանդես եկան ԿԵԵԽ-ի նախագահ կարդինալ Միլոսլավ Վլկը եւ ԵԵԽ-ի նախագահ Ջոն Առնոլդը: Ողջույնի խոսքով հանդես եկան նաեւ 1988թ. Բազելի առաջին համաժողովի ատենապետեր Ալեքսի Բ Համայն Ռուսիո եւ Մոսկվայի պատրիարքը եւ Միլանի արքեպիսկոպոս, կարդինալ Կարլո Մարիա Մարտինին: Այնուհետեւ ելույթ ունեցան համաժողովի նախապատրաստական կոմիտեի նախագահ պրոֆ. Գրիգորիոս Լարենցակեսը եւ «Ֆոկոլար» շարժման նախագահ Կիարա Լյուբիխը:

Առաջին նիստի փակման աղոթքը կարդացին Վեհափառ Հայրապետը եւ կարդինալ Էչեգարայը:

Երեկոյան ժամը 18.00-20.00-ը քաղաքի կենտրոնական Ֆրեյհեյթպլաց հրապարակում տեղի ունեցավ էկումենիկ միասնական աղոթք՝ բազմահազար ժողովրդի մասնակցությամբ, որի ընթացքում ընթերցվեց Բարդուղիմեոս Ա Տիեզերական պատրիարքի ողջույնի ուղերձը: Էկումենիկ միասնական աղոթքին մասնակցեց եւ ողջույնի խոսքով հանդես եկավ երկրի նախագահ Թոմաս Կլեստիլը:



Հաջորդ օրը՝ հունիսի 24-ին, գումարվեց համաժողովի երկրորդ նիստը, որի բացումը կատարեց կարդինալ Կասսիդին՝ հաղորդելով Հռոմի Հովհաննես Պողոս Բ պապի ողջույնը: Այնուհետեւ ներկաներին ողջունեց Քենթրբերիի արքեպիսկոպոս Ջորջ Քերին:

ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի անունից ողջույնի խոսք ասաց Ջորջ Ցեցիս վարդապետը:

Երկրորդ օրվա լիագումար նիստի եւ ընդհանրապես ամբողջ համաժողովի գլխավոր բանախոսն էր Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը հանդես եկավ առանցքային դասախոսությամբ, որի թեման էր՝ «Ինքներս մեզ հետ՝ դեմ առ դեմ»: Դասախոսությունն ընդունվեց ժողովականների (մոտ 10 000 մարդ) բուռն ծափահարություններով: «Մեր վստահելիությունը չափվելու է ոչ թե խոսքերի գեղեցկությամբ ու զորությամբ,- ասաց Վեհափառ Հայրապետը,- այլ՝ կյանք՝ հաշտություն եւ կյանք՝ հաշտության համար»:

Նիստին երկրորդ դասախոսությունը կարդաց Հարավային Աֆրիկայի Եկեղեցիների խորհրդի գլխավոր քարտուղար դոկտոր Հլոփե Քամը:

Նիստի ավարտից հետո Վեհափառ Հայրապետը հրավիրվեց մամլո ասուլիսի, որին մասնակցում էին հարյուրավոր լրագրողներ:

Վեհափառ Հայրապետը, պատասխանելով հարցերին, ներկայացրեց Հայ Առաքելական Եկեղեցու ունեցած ներդրումն ու դերը համընդհանուր քրիստոնեական Եկեղեցիների կյանքում եւ շեշտեց, որ քրիստոնեությունը պետք չէ սովորել եւ ընդունել որպես գաղափարախոսություն կամ փիլիսոփայություն, այլ այն պետք է ապրել որպես ճշմարտություն եւ կյանքով վկայել այդ ճշմարտության մասին:

### ԿԼԱԳԵՆՖՈՒՐՏԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 25-ին Վեհափառ Հայրապետը մեկնեց Կլագենֆուրտ՝ այցելելու հանրահայտ Մինի Մունդուս բացօթյա թանգարանը, ուր 50 երկրների նշանավոր ճարտարապետական կոթողների 1/25 չափագծի համամասնությամբ ստեղծված մանրակերտերի կողքին տեղադրված է նաեւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Մայր տաճարի մանրակերտը: Տեղի աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների, ինչպես նաեւ թանգարանի տնօրինության ներկայությամբ տեղի ունեցավ մանրակերտի հանդիսավոր օծումը:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 2

## ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԵՆՍԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը հուլիսի 9-ին Մայր Աթոռի Վեհարանում ընդունեց Արմենպրեսի թղթակցին՝ նրա խնդրանքով եւ Գրաց քաղաքում տեղի ունեցած Եվրոպայի եկեղեցիների երկրորդ էկումենիկ համաժողովի կապակցությամբ հետեւյալ հայտարարությունն արեց.

–Համագումարի նյութն այս էր՝ հաշտություն,- ասաց Վեհափառ Հայրապետը:- Սա քրիստոնեական, աստվածաբանական մի բառ է, որ մասնանշում է այն երեւույթը, որով մարդ Աստծո հետ հաշտ կապրի: Եւ մարդիկ Աստծո հետ հաշտ ապրել չեն կարող, եթե երբեք իրար հետ հաշտ չապրեն: Եւ այդ հաշտությունը մարդու առ Աստված հավատարմության ամենեն կարեւոր արտահայտություններից մեկն է: Պետք է ասել, որ մենք եղանք գլխավոր դասախոսներից մեկը՝ այդ նյութի շուրջ ընդարձակ մի ուսումնասիրություն կարդալով, որը թարգմանվեց հինգ տարբեր լեզուներով եւ բաժանվեց բոլոր ժողովականներին:

Այնտեղ մենք ասացինք, որ քրիստոնեական եկեղեցին աշխարհումս պետք ունի ներքին բյուրեղացման, ներքին բարենորոգումի, որովհետեւ քրիստոնյա լինելն անվանապես քրիստոնյա լինել չի նշանակում միայն: Քրիստոնեաբար ապրելը Քրիստոսի վարդապետության համաձայն ապրելն է, որ մարդուն քրիստոնյա է դարձնում: Այդ տեսակետից ուզում եմ ընդգծել, որ երկխոսությունը, խոսակցությունը, համագործակցությունը անհրաժեշտ են ոչ միայն քրիստոնեական եկեղեցիների միջեւ, այլ նաեւ ուրիշ կրոնների, հատկապես իսլամության հետ, որի մասին երկար խոսվեց այդ ժողովում:

Մենք էլ, մեր եկեղեցին էլ միշտ ջատագով է եղել իսլամ-քրիստոնյա խոսակցության, հարաբերության: Մենք իբրեւ հայեր ապրել ենք իսլամական երկրների մեջ, իսլամական երկրներով շրջապատված, բայց եւ միշտ ունեցել ենք բարեկամական հարաբերություններ՝ փոխադարձ հասկացողության գաղափարով առաջնորդված:

Ես խորապես ցավեցի, երբ իմացա, որ Իսրայելի մի քաղաքում անվանարկվել եւ անարգական արտահայտության է արժանացել իսլամական կրոնը եւ այդ կրոնի հիմնադիր Մուհամմեդը:

Մենք խստիվ դատապարտում ենք այդպիսի արտահայտությունները: Դրանք նպաստավոր չեն ո՛չ քրիստոնեության, ո՛չ էլ իսլամության ու մարդկության համար: Այդպիսի արտահայտությունները, այդպիսի վերաբերմունքները խիստ դատապարտելի են: Եւ մենք ցանկանում ենք, որ իսլամական կրոնի հետ մեր հարաբերությունը լինի փոխադարձ հասկացողության եւ գործակցության սեւեռակետ ունեցող եւ ոգի արտահայտող խոսակցություն:

Հետեւաբար մենք ցանկանում ենք, որ վերջ գտնեն նման անարգական արտահայտությունները հանդեպ իսլամական կրոնի, եւ մեր փոխադարձ բարեկամական հարաբերությունները շարունակվեն ու զարգանան առաջիկայում՝ այսօր, մոտեցող 21-րդ դարում եւ գալիք բոլոր ժամանակներում:

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

Նույն օրը երեկոյան Գրացի երկրորդ համաժողովի մասնակից Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչները հավաքվեցին Վեհափառ Հայրապետի մոտ՝ քննարկելու եւ ամփոփելու համաժողովի աշխատանքի արդյունքները: Մասնակիցներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր աշխատանքային խումբը:

Նորին Սրբությունը, ընդհանուր առմամբ ներկայացնելով պահի կարեւորությունը, շեշտեց աշխատանքային խմբերում ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը:

Հարկ է նշել, որ 43 երկրներից Գրաց ժամանած 700 պատգամավորների եւ շուրջ 10.000 հրավիրյալների ու հյուրերի ներկայությամբ հնչած «Ինքներս մեզ հետ՝ դեմ առ դեմ» Վեհափառ Հայրապետի դասախոսությունը մեծ հետաքրքրություն եւ խոր ազդեցություն թողեց ունկնդիրների վրա: Այն մեծ արձագանք գտավ հոգեւորական եւ քաղաքական շրջանակներում: Տարբեր ազգեր ներկայացնող բազմաթիվ լրագրողներ, մասնակցելով ընդհանուր մամլո ասուլիսին, նաեւ առանձին հարցազրույցներ վարեցին Վեհափառ Հայրապետի հետ: Ասուլիսի ընթացքում լրագրողների վրա ազդեցիկ տպավորություն գործեց Նորին Սրբության արտահայտած այն միտքը, թե «Հայ Եկեղեցին հին Եկեղեցի է, բայց ոչ՝ հնացած»:

### ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Հունիսի 26-ին Նորին Սրբություն Գարեգին Ա կաթողիկոսը, ավարտելով իր մասնակցությունը Գրացի երկրորդ էկումենիկ համաժողովին, մեկնեց Վիեննա՝ իր հայրապետական այցելությունը տալու Վիեննայի հայ համայնքին, ինչպես նաեւ հանդիպումներ ունենալու Ավստրիայի Հանրապետության եկեղեցական, պետական եւ դիվանագիտական շրջանակների ներկայացուցիչների, պատասխանատու պաշտոնյաների հետ:

Երեկոյան ժամը 18.00-ին Վիեննայի «Իմպերիալ» հյուրանոցի սրահներից մեկում Ամենայն Հայոց կաթողիկոսը հանդիպեց Ավստրիայի Հանրապետության մի շարք պաշտոնական անձանց հետ: Հանդիպումների ընթացքում Նորին Սրբությանն ուղեկցում էին Ավստրիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Աշոտ Ոսկանյանը եւ Ավստրիայի եւ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը:

Նորին Սրբությանը բարի գալուստ մաղթելու էին եկել Վիեննայի նախկին արքեպիսկոպոս՝ կարդինալ Քյոնիկը, Վիեննայի արքեպիսկոպոս Շյոնբորնը, տարբեր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Ավստրիայի Հանրապետության կրոնի նախարարության ներկայացուցիչը, Վիեննայի ազգային գրադարանի տնօրենը, «Փրո Օրիենթե» կազմակերպության նախագահը, Վիեննայի համալսարանի դասախոսներ, Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Լիբանանի, Սիրիայի, Հունաստանի դեսպաններ, այլ պաշտոնատար անձինք, ավստրիահայ եկեղեցական վարչության անդամներ:

Ընդունելության ընթացքում Ավստրիայի հայոց առաջնորդ Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին, ապա ներկայացրեց Նորին Սրբության՝ Ավստրիա կատարած այցելության նպատակները. իբրեւ բանախոս մասնակցել Եվրոպական Եկեղեցիների խորհրդի եւ Կաթոլիկ եպիսկոպոսների եվրոպական խորհրդի կողմից Գրացում կազմակերպված էկումենիկ երկրորդ համաժողովին, ինչպես նաեւ հայրապետական առաքելությամբ հանդես գալ Հայ Առաքելական Եկեղեցու ավստրիական համայնքի առջեւ:

Նորին Սրբությունը, շնորհակալություն հայտնելով ջերմ եւ անկեղծ ընդունելության համար, մանրամասնորեն պատմեց իր այցելության նպատակների մասին եւ մաղթեց, որ Աստված օրհնի եւ առավել եւս սերտացնի հարաբերությունները ինչպես Ավստրիայի եւ Հայաստանի Եկեղեցիների ու պետությունների, այնպես էլ երկու երկրների ժողովուրդների միջեւ:



Նույն օրը՝ երեկոյան ժամը 20.00-ին, Վեհափառ Հայրապետը հյուրընկալվեց Վիեննայի արքեպիսկոպոս դոկտոր Քրիստոֆ Շյոնբորնի կողմից:

Հունիսի 27-ին՝ առավոտյան ժամը 11.00-ին,Վեհափառ Հայրապետն այցելեց Վիեննայի քաղաքապետարան, ուր նրան ընդունեց Վիեննայի քաղաքագլուխ Մ. Հոյպլը: Նորին Սրբությունն իր ստորագրությունը թողեց Վիեննայի պատվավոր այցելուների «Ոսկե գրքում»:

Այնուհետեւ կեսօրին Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Վիեննայի նախկին արքեպիսկոպոս՝ կարդինալ Քյոնիկի, ինչպես նաեւ «Փրո Օրիենթե» կազմակերպության ներկայացուցիչների հետ:

Կեսօրից հետո Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Ավստրիայի Արտաքին գործոց նախարարության ընդհանուր քարտուղարի հետ:

Նույն օրն Ավստրիայի փոխվարչապետ եւ արտգործնախարար Շյուսելի կողմից կազմակերպվեց ընդունելություն՝ ի պատիվ Ամենայն Հայոց կաթողիկոսի:

Երեկոյան, Ավստրիայի ազգային գրադարանի եւ «Փրո Օրիենթե» կազմակերպության կողմից, գրադարանի հանդիսավոր արարողությունների դահլիճում տեղի ունեցավ Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին նվիրված հատուկ հանդիսություն: Ողջույնի խոսքով հանդես եկան Ավստրիայում Վատիկանի հատուկ պատվիրակ՝ կարդինալ Սկուջիարինին, Վիեննայի արքեպիսկոպոս Շյոնբորնը, Ազգային գրադարանի տնօրենը: Ընթերցվեց զեկուցում հայկական մշակույթի դերի մասին՝ եվրոպական ընդհանուր մշակութային կոնտեքստում: Պատասխան խոսքով հանդես եկավ Նորին Սրբություն Գարեգին Ա կաթողիկոսը:

Ազգային գրադարանի տնօրենը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց գրադարանում պահվող մասունքներ, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն հայերի համար. Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի պահպանված միակ ձեռագիրը, հայկական հին գրքեր եւ այլ հնություններ:

Հունիսի 28-ին հռչակավոր «Շտեֆանդոմում» Սբ. Ստեփանոսի Մայր տաճարում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրության արարողություն, որին, Վիեննայի արքեպիսկոպոս Շյոնբորնի հրավերով, մասնակցեց Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Արքեպիսկոպոս Շյոնբորնը տաճարում հավաքված հավատացյալ հոծ



բազմությանը ներկայացրեց Հայ Եկեղեցու անցած ուղին եւ հայ ժողովրդի պատմության առանձնահատկությունները: Արարողության վերջում ներկաներին իր խոսքն ուղղեց Գարեգին Ա կաթողիկոսը:

Կեսօրին Նորին Սրբությունն այցելեց Հերցոգենբուրգի Օգոստինյան վանք, իսկ երեկոյան հանդիպեց ավստրիահայ համայնքի ներկայացուցիչների հետ:



Վեհափառ Հայրապետը կարդինալ Քյոնիկի եւ արքեպիսկոպոս Շյոնբորնի հետ

Նույն օրը երեկոյան Նորին Սրբությունը մասնակցեց Ավստրիահայ եկեղեցական վարչության կողմից իր պատվին կազմակերպված պաշտոնական ընթրիքին:

Հունիսի 29-ին Վեհափառ Հայրապետը մասնակցեց Ս. Հռիփսիմե հայկական եկեղեցում մատուցված հանդիսավոր պատարագին եւ քարոզով դիմեց հավաքված բազմությանը: Պատարագին ներկա էին նաեւ դեսպաններ, այլ եկեղեցիների հոգեւոր առաջնորդներ:

Օրվա երկրորդ կեսին Վեհափառ Հայրապետը այցելեց նաեւ Քլոսթերնոյբուրգ վանք:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը հրավիրվեց ընթրիքի Ստորին Ավստրիայի մարզպետի՝ դոկտոր Էրվին Փրեոլի կողմից:

Հունիսի 30-ին Նորին Սրբություն Գարեգին Ա կաթողիկոսն այցելեց Ավստրիայում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն: Դեսպան Աշոտ Ոսկանյանը Վեհափառ Հայրապետին ծանոթացրեց դեսպանատան աշխատանքներին:

Կեսօրին Վեհափառ Հայրապետն այցելեց Ավստրիայի կրթական նախարար տիկին Էլիզաբեթ Գերերին:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը մեկնեց Մխիթարյան միաբանություն, որտեղ ի պատիվ Նորին Սրբության՝ տրվեց ընթրիք:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ՝ ԷՋ 3

## ԺԱՄԱՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ «ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՆՁԵՐԸ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԿՐԵՄԼՈՒՄ

Հուլիսի 1-ին՝ վաղ առավոտյան, Վեհափառ Հայրապետը մեկնեց Մոսկվա՝ Ալեքսի Բ Համայն Ռուսիո պատրիարքի հետ միասնաբար կատարելու Հայ Եկեղեցու եւ Էջմիածնի գանձերի մեծ ցուցահանդեսի բացման արարողությունը:

Հուլիսի 2-ին Կրեմլում Ալեքսի Բ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարքի առանձնատանը կայացավ Ալեքսի Բ պատրիարքի եւ Գարեգին Ա կաթողիկոսի հանդիպումը: Հանդիպմանը հաջորդեց մամլո ասուլիսը Կրեմլի Ուսպենյան զանգակատանը, որին երկու Եկեղեցիների հոգեւոր առաջնորդներից բացի, մասնակցեցին Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Արմեն Սմբատյանը, Ռուսաստանի Դաշնության մշակույթի փոխնախարար Միխայիլ Շվիդկոյը: Ասուլիսը վարում էր Կրեմլի արգելոց-թանգարանի տնօրեն Իրինա Ռոդիմցեւան, ներկա էին զանգվածային լրատվության միջոցների 100-ից ավելի ներկայացուցիչներ:

Մոսկվայի ժամանակով ժամը 14.00-ին կայացավ ցուցահանդեսի հանդիսավոր բացումը, որին, բացի վերոհիշյալ անձերից, մասնակցում էին նաեւ Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարար Եվգենի Սիդորովը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ, Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի նախապատրաստական աշխատանքները կազմակերպող պետական հանձնաժողովի նախագահ Գագիկ Հարությունյանը, Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպս. Պոզապալյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպս. Մարտիրոսյանը, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Տիրան արքեպս. Կյուրեղյանը, Կանադայի թեմի առաջնորդ Հովնան արքեպս. Տերտերյանը, 1700-ամյակի հանդիսությունների կենտրոնական գրասենյակի վարիչ-քարտուղար Մեսրոպ արքեպս. Աշճյանը, հատուկ այդ նպատակով Մոսկվա ժամանած Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ Լուիզ-Սիմոն Մանուկյանը, տարբեր երկրներից Մոսկվա ժամանած սփյուռքահայ ճանաչված գործիչներ, Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների բարձրաստիճան հոգեւորականներ, Ռուսաստանի Դաշնությունում հավատարմագրված դեսպաններ, նախարարներ, արվեստի ականավոր գործիչներ:

Մինչեւ օգոստոսի կեսերը Կրեմլի այցելուները հնարավորություն կունենան ծանոթանալու Էջմիածնից առաջին անգամ դուրս բերված ցուցանմուշներին:

Նույն օրը Մոսկվայի «Մետրոպոլ» հյուրանոցում Վարդգես Արծրունու գլխավորությամբ Հայ Առաքելական Եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմական խորհրդի կողմից կազմակերպվեց ընդունելություն՝ ի պատիվ Գարեգին Ա կաթողիկոսի եւ Ալեքսի Բ պատրիարքի:

Հունիսի 3-ին Ամենայն Հայոց կաթողիկոսն այցելեց Մոսկվայում հայկական եկեղեցու շինարարության համար հատկացված հողատարածք եւ օրհնեց այն: Համալիրը համապատասխանում է բազմահազար հայ համայնքի կարիքներին: Թեմի առաջնորդի նստավայրից բացի, այն կունենա նաեւ կիրակնօրյա դպրոց, ննջարանի դահլիճ, գրադարան: Այնուհետեւ կայացավ նրա հանդիպումը Հայ Առաքելական Եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմական խորհրդի անդամների հետ:

Նույն օրը երեկոյան Գիտնականների տանը տեղի ունեցավ Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիպումը Մոսկվայի հայ համայնքի հետ: Հանդիպմանը ներկա էին Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանների նախագահներ Մարատ Բագլայը եւ Գագիկ Հարությունյանը, հանրահայտ գիտնականներ, գործարարներ, դերասաններ, նկարիչներ, քանդակագործներ, հոգեւորականներ, սփյուռքի ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Տիրան արքեպս. Կյուրեղյանը, այնուհետեւ ելույթ ունեցավ Վեհափառ Հայրապետը:

Հունիսի 4-ին Գարեգին Ա Վեհափառ Հայրապետն այցելեց Մոսկվայի Սբ. Հարություն հայկական եկեղեցի: Եկեղեցում քարոզ կարդալուց հետո Վեհափառ Հայրապետն ինքնաթիռով Երեւան ուղեւորվեց Վնուկովո օդանավակայանից:

*Բագրատ աբեղա Գալստյան*
*«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

*Լարիսա Նավասարդյան*
*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*

## «ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՆՁԵՐԸ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱՏԱԼՈԳ-ԱԼԲՈՄԸ




1997թ. հուլիսի 2-ին Մոսկվայում՝ Կրեմլի Ուսպենյան տաճարի սրահում, բացվեց Հայ եկեղեցու գանձերի իր տեսակի մեջ առաջին եւ աննախընթաց ցուցահանդեսը: Այս ցուցահանդեսով նշանավորվեց Հայոց աշխարհի քրիստոնեության պետական կրոն ընդունման 1700-ամյակի տոնակատարությունների մուտքը: Հայոց Հայրապետն այս ցուցահանդեսը ձոնեց նաեւ Մոսկվա քաղաքի 850-ամյակին, այս ծիրի մեջ կատարվելիք տոնակատարություններին՝ որպես առաջին ընծա Ռուս Ուղղափառ եկեղեցուն եւ պետությանը Հայ եկեղեցու կողմից:

Այս ցուցահանդեսը, Հայ եկեղեցու 1700-ամյակի տոնակատարությունների ծրագրի երախայրիքը լինելով, Գարեգին Վեհափառի հոգածությամբ, 1700-ամյակի տոնակատարության կազմակերպման կենտրոնական հանձնախմբի նախաձեռնությամբ եւ Հայաստանի Մշակույթի նախարարության գործուն մասնակցությամբ առավել արժեվորվեց եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) ինքնատիպ գունազարդ կատալոգ-ալբոմի հրատարակումով՝ «Հայ եկեղեցու գանձերը» վերտառությամբ: Ալբոմը պարունակում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավաքածուի այն բոլոր 79 ցուցանմուշները, որոնք տեղ են գրավել ցուցադրանքում: Այն բացվում է Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի «Տասնեօթ դարերի քրիստոնէական վկայութիւն՝ արուեստի եւ մշակոյթի միջոցով» նախաբանով, ուր Վեհափառ Հայրապետը շեշտում է այն իրողությունը, որ հայ մշակույթն ու արվեստն իրենց ամբողջության մեջ սքանչելի արտահայտություններն են հայ ժողովրդի քրիստոնեական կյանքի: Վեհափառ Հայրապետի խոսքին հաջորդում է Իվետա Մկրտչյանի եւ Սեյրանուշ Մանուկյանի շարադրանքը՝ մանրամասնորեն ներկայացնելով ցուցահանդեսին ներկայացված բոլոր նմուշները: 95 էջերի վրա, յուրաքանչյուր առարկայի համառոտագրություններով եւ բացատրություններով, գունավոր պատկերներով ներկայացված է ամբողջ հավաքածուն: Կատալոգը եզրափակված է ցուցանմուշների ռուսերեն հանգամանալից նկարագրությամբ:

Այս շքեղ կատալոգը հրատարակվել է Մոսկվայում, իսկ տպագրության ծախսերը հատկացրել է Արսեն Խանամիրյանը՝ հանգուցյալ Փոլ Կարապետյանի կտակից:

Մոսկովյան ցուցահանդեսը եւ նրա արգասիք կատալոգ-ալբոմը մի գեղեցիկ առիթ է ոչ միայն հայ, այլեւ օտարազգի արվեստասերներին ներկայացնելու մեր եկեղեցու 1700-ամյա անցած ճանապարհը եւ այդ ճանապարհին ստեղծված հոգեւոր մշակութային արժեքները: Վեհափառ Հայրապետի բնորոշմամբ «թող այս ցուցահանդէսը բոլոր այցելուներին՝ հայ, ռուս եւ այլ ազգերի համար դառնայ հոգեւոր վերելքի եւ վերացումի աղբիւր: Այն թող դառնայ սերտ համագործակցութեան եւս մէկ կապ Դաշնային Ռուսաստանի եւ Հայաստանի Հանրապետութեան, Ռուս Ուղղափառ եւ Հայ Առաքելական եկեղեցիների, ինչպէս նաեւ բոլոր՝ Կաթոլիկ, Ուղղափառ եւ Աւետարանական եկեղեցիների միջեւ:

Թող երրորդ հազարամեակի սկզբնաւորումով Քրիստոնէական հաւատը մտնի ծաղկման մի նոր դարաշրջան»:

## ԻՍՊԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Հունիսի 27-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին ժամանեց Հայաստանի Հանրապետությունում Իսպանիայի նոր նշանակված դեսպան Խուան Անտոնիո դե Իտուրիագա Բարբերան՝ իր տիկնոջ եւ դեսպանատան մինիստր Ռաֆայել Դեսկալյար Մասարեդոյի ուղեկցությամբ: Վեհարանում հարգարժան հյուրերին ընդունեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Սրբազան Հայրն անձամբ իր եւ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունից ջերմորեն ողջունեց պարոն Իտուրիագային եւ շնորհավորեց նրան այդ դժվարին եւ պատասխանատու պարտականության ստանձնման առթիվ եւ նրան մաղթեց հաջողություններ:

Այնուհետեւ Սրբազան Հայրը հյուրերի խնդրանքով նրանց պատմեց Հայ Առաքելական եկեղեցու անցած դժվարին պատմական ուղու մասին, ներկայացրեց մեր եկեղեցու արդի իրավիճակը, նրա ունեցած դերը, նշանակությունը, խնդիրներն ու առաքելությունը մեր ազատ ու անկախ հանրապետության կյանքում: Սրբազան Հայրը ներկայացրեց նաեւ Հայ Առաքելական եկեղեցու կառուցվածքը Հայաստանում եւ սփյուռքում: Նա շեշտեց այն հանգամանքը, որ Հայ Առաքելական եկեղեցին մշտապես համագործակցել է եւ այժմ էլ սերտ բարեկամական փոխհարաբերությունների մեջ է գտնվում աշխարհի այլ քրիստոնյա եկեղեցիների հետ:

Հյուրերը խորին ակնածանքով ծանոթացան Հայ Առաքելական եկեղեցու բազմադարյա պատմությանը, այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ եւ ծանոթացան հայ եկեղեցական արվեստի գանձերին:

## ԱՆԳԼԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՄԲԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հուլիսի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Անգլիայից Հայաստան ժամանած ուսանողների խումբը՝ «Ուսուցողական ճամփորդություններ» ծրագրի ղեկավար պարոն Օքերփոլի գլխավորությամբ: Խմբին Վեհարանի իր աշխատասենյակում ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Տեղի ունեցած անկեղծ եւ ջերմ զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը հյուրերի խնդրանքով մանրամասն տեղեկություններ հաղորդեց Հայ Առաքելական եկեղեցու նստավայր եւ հայ ժողովրդի հոգեւոր կենտրոն Ս. Էջմիածնի, Մայր Աթոռի գործունեության մասին, համառոտ ներկայացրեց հայ ժողովրդի եւ եկեղեցու բազմադարյա պատմությունն ու անցած ուղին: Նորին Սրբությունն ուրախությամբ նշեց, որ հայ ժողովուրդը, սթափվելով կոմունիստական ժամանակաշրջանի 70-ամյա մղձավանջից, հոգեւոր վերածնունդ, բյուրեղացում է ապրում: Այդ առումով Վեհափառ Հայրապետը խոսք կարեւորեց եկեղեցու դերն ու նշանակությունը հատկապես այս դժվարին ու հակասություններով լի ժամանակաշրջանում:

Վեհափառ Հայրապետը, պատմելով Հայ Առաքելական եկեղեցու մասին, անդրադարձավ նաեւ էկումենիկ փոխհարաբերություններին եւ համագործակցությանն աշխարհի այլ եկեղեցիների հետ՝ դրանց թվում մատնանշելով Հայ Առաքելական եկեղեցու պատվիրակության մասնակցությունը վերջերս Ավստրիայի Գրաց քաղաքում հրավիրված եվրոպական երկրորդ էկումենիկ համաժողովին:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*

